


9



ԳԱՆՁ

ԱՐՀԵՍՏԻՑ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ԱՐՅԵՍՏԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԴԻՆ 60 ՓԱՐՍ.

Վեցամսեան 30 դահ.

Տարեկան 60 դահ.

Գաւառաց համար
այ գինը միեւնոյնը
բլաւով, իսկ ճամբու
ծախքը բաժանոր-
դաց վրայ է:

Մանուցման տողը
40 փարայ է:

Լրագիրս բաց ի քողա-
քականութենէ. Բժշկո-
կան, Արհեստական և
երկրագործութեան վրայ
յօդուածներ կ'ընդու-
նի տառնց ունէ բան
մը պահանջելու, որ
պէտք է ղրկել Տեքթ. կ.
Ճէռահեան անուամբ,
Թօփհանէի Թրամկոյի
կայսրանին գիմաց թիւ

357


ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ՏՕԲԹ. 4 ՃԵՌԱՏԵԱՆ

ՊՕՍՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՆՁ ԼՐԱԴՐՈՑ

1885 Մարտ թիւ 1



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գործաթերթի մերքին լինելը բազմապիսի է, Բժշկական, Երկրագործական և Արհեստից վրայ տեղեկութիւններ տալով և ամեն մէկ մասին յատկացիալ թերթեր ալ աւելցունելով զանազան դերքեր պիտի յօրինուին. արինակի համար.

Բժշկութեան մասին յաւելում թերթը, կենաց շրջանի վրայ խօսելով բոլոր հիւանդութիւնները տարիքի համեմատ նկատելով ամբողջ բժշկութիւնը պիտի պարունակէ իրենց դարմաններովը. ժողովուրդին առաջնորդ կենաց բլրալու.

Արհեստական մասին իբր յաւելում թերթ, ամեն առտակ արհեստից դաստիարակ տեղեկացնելով, զատ հատորներ պիտի կազմուին:

Երկրագործական մասին ալ ընդ հանուր երկրագործութենէն յետոյ, բանջարեղինաց և ծաղկանց պարտէզներու և զանազան ճիւղերու վրայ պիտի խօսի. վերջապէս բոլոր կարելոյն ժողովուրդին յիշատակ արհեստից գանձ մը ներկայացունելու պիտի աշխատուի:

MEMORANDUM

The following is a summary of the information received from the various sources mentioned in the report. It is intended to provide a general overview of the situation and to highlight the key points for consideration.

The information received from the various sources is as follows:

1. The situation is generally stable, with no major changes reported.

2. The economy is showing signs of improvement, with a slight increase in production and a decrease in unemployment.

3. The social situation is generally peaceful, with no major disturbances reported.

4. The political situation is stable, with no major changes reported.

5. The military situation is stable, with no major changes reported.

6. The foreign relations are generally stable, with no major changes reported.

7. The internal security is generally stable, with no major changes reported.

8. The public opinion is generally stable, with no major changes reported.

9. The international relations are generally stable, with no major changes reported.

10. The overall situation is generally stable, with no major changes reported.

Ս. ՇՐՁՍՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ
 ՈՐ ԱՆՈՐՈՇ ՎԻՃԱԿԻ ՄԸ
 ՄԷՋ ԱՆՑԱԻ ՄԻՆՁԵԻ
 ՀԻՊՊՈԿՐԱՏ
 (430 ՏԱՐԻ Փ. Է ԱՌԱՋ)

Բժիշկները ժողովրդեան
 համար մէկմէկ չստուգած-
 ներ էին. ժամանակէ մը վեր-
 քը կռատանց մէջ կուռքերը
 չի կարենալով խօսիլ, քրմա-
 պետք կուռքը կը հրամա-
 յէ, ըսելով՝ ժողովրդեան
 դեղեր կը պատուիրէին և
 բժշկուողները առատ բն-
 ծայներու զոհեր կը մատու-
 ցանէին կուռքերուն, զորս
 քրմապետք կը վայելէին ։
 Այն ժամանակը շատ մը դե-
 ղագիրներ հաւաքուած էին
 իբր մատենադարան, որոց
 մէջ ամփոփուած էր նոյն
 ատենուան ծանօթ բժշկու-
 թիւնը ։ Եսկիւլապ եղաւ
 բժշկութեան չստուգած և
 իւր սերունդը, որմէ սերե-
 ցաւ Հիպպոկրատ, կոչուե-
 ցաւ Եսկիւլապեան (Էսքլէ-
 րիտ) ։ Այս ցեղը գերա-
 զանցեց ուրիշ գիւց ցեղերն,

ժողովրդեան յատկացուց
 իրեն սեփականեալ արհես-
 տըն, զոր փիլիսոփայք կ'ըս-
 տանձնէին և օրէնքներ ըս-
 տեղծելով՝ իւրեանց աշա-
 կերտաց կը դասախօսէին ։

Սոյն շրջանին մէջ օձը իբր
 բժշկութեան նշան կը պաշ-
 տուէր Փիւնիկեցւոց, Ե-
 գիպտացւոց, Հրէից, Յու-
 նաց և ուրիշ հին ազգաց
 մէջ ։

Ոսիրիս, որու խորհրդա-
 նշանն էր Արեւը, Եգիպտո-
 սի առաջին և ամենամեծ
 բարերարն էր ։ Իւր կինն ու
 քոյրը, Իսիս, որու խորհրդ-
 դանշանն էր Լուսինը, բը-
 ժշկութեան մէջ հրաշալիք
 մը գործելով՝ իւր որդին ող-
 ջընցուց ։ Ոսիրիսի որդին
 կամ բարեկամը՝ Երմիս,
 ուսմանց և տրհնտից ըս-
 տեղծիչն եղաւ ։ Իւր ծանօ-
 թութիւններն արձանագըր-
 ուած էին սիւներու վրայ ։
 զորս վերջէն քաղեցին Էմպ-
 ըրի մէջ Բաբելոնի գտնը-
 ուած ժամանակ, սոցա վեց
 գիրքը կը խօսի բժշկու-

թեան վրայ և օրինագիրք մ'էր, որմէ շեղելու չէին բժիշկք, աստիճէ նշ մասնուան կը դատադատուէին:

Ապոգոն բժշկութեան շատուածն էր: Շիրօն, որ դիւցադն բժիշկ մ'էր, գիւցադնական ժամանակաց մէջ թանաց շատուածն եղաւ: Եսկիւլապ, Շիրօնի աշակերտը և Ապոգոնի որդին սկսաւ հիւանդներո արտաքին դեղերով բուժել, սուրբ տեղերու մէջ կռտաւեններ կանգնուեցան իրեն, որոց մէջ բժշկութիւններ կ'ընէր ծածագահայ թիւամբ, գաղտնի արարողութիւններով, բազնիրենբով, զփումներով, մարմնամարգարթիւն երով, արիւն տանելով, լուծողական թեթեւ դեղերով. երբեմնայ կռտաւենք մէջ կախուած փոքրիկ ձոյն հանող պատկերներով, որոնք հիւանդ մասերը կը ներկայացունէին և բժշկուած մասերուն նշանակութիւնը կը կըրէին:

Եսկիւլապեան, սերունդ

և յաջորդ Եսկիւլապի, որ ունէր իւր մեհեաններն ու քուրմերը, որոց ամենէն նշանաւորներն Քոս և Քրիտացոց երկիրներուն մէջ էին:

Էօրիֆօն, Քրիտացոց երկիրն անուանի բժիշկն էր:

Աքրոն, Ակրիմանցի, որ Աթէնքի մէջ ժանտախտը դադրեցուց մեծ հրդեհով մը:

Պիւթագոր (Քրիստոսէ 580—600 ամրի յառաջ), որ հաստատեց միգական, պահեցողական և գործնական գիտութիւնը:

400 ին Ամպիտոլէյէս մարմնոյ մէջ պաւ շորո տորր, որմէ կը ծագին հիւանդութիւնք և նոցա համար սահմանեց դերբնական դարմաններ, օրինակի համար գնել հիւանդները քառաղիներու մէջ:

1398 ին Մէլամբ, գուշակ բժիշկ, որ Պրոթէոս թագաւորին աղջկանց խենթութիւն ու ատրախտիկ հե-

ւանդութիւններն բժշկեց
սեւ ելլեքորոտով, մաքրու-
թեամբ և մարմնամաքղու-
թեամբ :

— օ —

Բ. ՇՐՁԱՆ

580 ՏԱՐԻ

ՀԻՊՊՈԿՐԱՏԷՆ ՄԻՆՉԵԻ

ԳԱԼԻԷՆ

(430 ՏԱՐԻ Ք. Է ՅԱՌԱՋ

150 ՏԱՐԻ Ք. Է ԵՏՔԸ

— օ —

Հիպոկրատ հին փորձե-
րէն օգուտ քաղելով և անձ-
նականն ալ անոնց վրայ ա-
ւելցնելով, հիւանդութեանց
ունայա դարմաններուն վը-
րայ անգիւղութիւններ յօ-
րինեց : Իւր աշակերտները
վարդապետական (Տոկմա-
թիք) դպրոցը հաստատե-
լով, զննութեան սկզբուն
քը մտուցին : Անմիտապէս
այս դպրոցին դիմամբոց
երկու դպրոց բացուեցան
Աղեքսանդրիոյ մէջ : մին
փորձական (Ամրիլիք) : որ
հիմնուած էր Հիպոկրատի
նշյալին հետեւող փորձի և
նշաններու նմանութեանն

վրայ, մէկ մ'ալ Նոր վար-
դապետական, որ ակներեւ
պատճառները ուսանելով,
տեսական զննութեանց
դարմանը կը անօրինէր :
Վերջէն Հռովմի մէջ Դրա-
կան (մեթոսիք) դպրոցը ե-
րեւան ելաւ այն երկուքին
դէմ, որ կը հերքէր պատ-
ճառաց ուսումն և կը հաս-
տատէր գործարանական
փոքր մասերու ծանօթու-
թիւնը : Ի վերջոյ Բնտրո-
ղական (Էքլէքթիք) դպրոցն՝
փորձականութիւնն, Դրա-
կանութիւնն ու վարդապե-
տականութիւնն միացնելով՝
ամենուն վրայ իշխեց և
միւսներն հաղիւ այլ եւս
քանի մ'աշակերտ միայն ու-
նեցան :

Փորձականներու աշխա-
տութեամբն ճանչցուեցան
շտա մը դեղերու և թոյնե-
լու յատկութիւններն :

— օ —

Գ. ՇՐՋԱՆ
1976 ՏԱՐԻ
ԳՍԼԻԻԷՆԷՆ ՄԻՆՉԵԻ
ԲԱՐԱՍԵԼՈ .
(150—1526)

— 0 —

Գալիէն տեսականաբար
վարդապետական և գործ-
նականաբար փորձական ,
իրմէ տալիս է կողմերու սկզբ-
բունքը կը ժողովէ և կը հը-
րամայէ , երեւան կը հանէ
Հիւթականութիւնն (իւմո-
րիզմ) , որու սկզբունքը կը
դանուէր Հիպպոկրատի և
իւր դպրոցի գրութեանց
մէջ . Այս հիւթականու-
թիւնն ի վերջոյ մոզութեան
և սնտալաշտութեան խառ-
նուելով , տիրապետութիւն
կ'իշխէ առաւել քան առան-
երկու դար :

Ավիստն, որ Գալիէնի զը-
րութիւնն ունէր , այս իշ-
խանութեան մասնակցեցաւ
600 տարիի մօտ .

ԺՆ. ՐԴ. Դարուն վերջերը
ծնու մաս առ մաս զննելու
խորհուրդը , և նոր կար-
ծուած հիւանդութիւններն

պատմուելով Հիպպոկրատի
գործերն սկսան ուշադրու-
թեան տունուիլ իրենց ճշ-
գութիւններովն , նախ ի-
տալիայ , ապա Գաղղիոյ և
Անգղիոյ , վերջապէս Արա-
բաց և Յունաց կուսակից-
ներուն մէջ վէճ մը ծագե-
լով ի Գաղղիա , Հիպպոկրա-
տի կողմը յաղթանակեց :

— 0 —

Գ. ՇՐՋԱՆ
205 ՏԱՐԻ
ԲԱՐԱՍԵԼՈՒՆ ՄԻՆՉԵԻ
ՍՕՎԱԺ
1526—1731

— 0 —

Բարասէլս հիւանդու-
թիւններն տնօրինեց իւր Ռ-
դեստական (Թէօֆիլ) և
Ալքիմիական (Ալիմի) գա-
ղափարներովն .

Վանհիլման հիւանդու-
թեանց պատճառն ստա-
մըքսէն համարեց ,

Բարասէլս վերջէն խորհե-
ցաւ թէ կենաց կարողու-
թիւնը սննդական էութիւնն
կախեալ է .

Սիլվիուս հիւթոց բորբո-

քուձն համարեց հիւանդութեանց պատճառ. և Սթալ հոգիի հիւանդութիւններն կարծեց :

Հօֆման կարծի մարմնոց վատթարութիւնն համարեց, որու մէջ գլխաւոր դերը կը խաղայ ախտաբեր հիւթն. զննութեան խորհուրդն ամեն տեղ կը տարածուի :

Պայյուի հետեւութեամբ և Պաքօնի դրութեամբ զօրացած ու Սիտանհամի աշխատութեամբ եղբւրթիւններն հաւաքուած ու խնամօք մեկնուած հիւանդութիւնք անդամազննութեան եռանդով մշակուեցան :

— 0 —

Ե. ՇՐՋԱՆ

49 ՏԱՐԻ

ՍՕՎԱԺԷ ՄԻՆՉԵԻ ՊՐԱՌԻՆ
(1731—1780)

— 0 —

Հիւանդութեանց բացատրութիւնք բաղմանալով՝ դասակարգութեան պէտք կ'զգացուի : Սովաթ ամբողջ կը հրատարակէ զանոնք կէսը հիւթական և կէսն ալ

նշաններով : Գերմանիոյ մէջ ասոր կը հետեւին փոքր ինչ ուսման մասը աւելցնելով և հիմը նոյնը պահելով, ախտաբանական անդամազննութիւնը, թէեւ յառաջագիմութիւն գտաւ, սակայն թերեւս առանց սկզբնական էր. նորա դասակարգութիւնն ազդեցութիւն չունեցաւ : Քիւլէն կարծրաբանութեան («օլիտիզմ») հիմն դրաւ :

— 0 —

Զ. ՇՐՋԱՆ

36 ՏԱՐԻ

ՊՐԱՌԻՆԷՆ ՄԻՆՉԵԻ ՊՐԱՌԻՆ
1780—1816

— 0 —

Քիւլէնի այսկերան՝ Պրաուն, որ բացարձակ կարծրաբան («օլիտիսթ») էր. ընդհանուր սկզբունք բռնելով Յուզումն (էնսիթասիօն) հիւանդութիւնները երկու կարգի իջեցուց : Իւր դրութիւնը տարածուեցաւ Խտալիոյ, Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ Անդրիայէն աւելի և իւր ազդեցութիւնն ընդ-

հանրայն աւելի գործնականացէս քան թէ տեսականացէս : Շատերը իւր գրութեան դէմ նշանաց ունումն գործածեցին : Բինէլ Գաղղիոյ մէջ մեծ համբաւ վասակելով՝ օրինակ հանդիսացաւ : Գանազան և նորանոր տարափոխիկ հիւանդութեանց վրայ մանրամասն բացատրութիւնք արուեցան : անդամազննական անտարանութիւնն մըշակելու սկսան իբր բացատրիչ ուսում : Բայց Գերմանիոյ մէջ Շիլլէնկի աշակերտներէն ոմանք թեւեռամիտութեան (սոլարիթէ) քննութիւն ենթադրական սկիզբունքներն ստեղծեցին , մինչդեռ այլք , Ծուրրօի հետեւելով , ամեն բան քիմիական բաղադրութիւններով կ'ուզէին մեկնել : Որեւնոյն ժամանակ երեւան ելան Նոյնարուժութեան (օմէրօթի) և Հակադրդութեան (րոնթրոսթիմիլիսմ) տեսութիւններն , որք տեսականացէս այնքան ենթա-

գրական և մտայածին էին , իսկ գործնականացէս՝ փորձակն , որոց մին մեծ քանակութեամբ կուտայ դեղերն , իսկ միւսը միլիոններով ցորեն :

— օ —

Է. ՇՐՋՍՆ

ՊՐՈԻՊՍԷՆ ՄԻՆՁԻ

ՄԵՐ ՕՐԵՐԸ

— օ —

Պրուսէ տեսական գիտութիւնք հիւանդ գործարանաց սեփականելով ընդհանուր կարծուած հիւանդութիւններն կ'ուսումնասիրէ իրենց զանազան տատիւնն զրգուման մէջ : Գործարանաց ճշմարիտ պաշտօններն երեւան կը հանէ : Իւր գրութիւնն աւելի կը տարածուի Պելճիքայի , Սպանիոյ և Ամերիկայի մէջ : Զինքը կը շփոթէ նոր հիւսկանութիւն մը , զոր ի զուր կը ջանայ երեւան հանել : Շատ մը ընդհանուր հեղինակութիւններ և հանրագրութիւններ կը հրատարակէ , և բոլոր այն տեղերն ,

ուր մուտ չի գտաւ նոր դա-
դափտին, զանազան դեղե-
րու կարողութիւնը փորձե-
լով բաւականացան:

ԵՐԿՐԱՊՈՐԾԱԿԱՆ

Երկրագործութեան ինչ
աստիճան պիտանի ըլլալը
ցցունելու մտք աշխարհիս
տմենէն հին ազգերէն գրա-
նուող Ձինտիւնց գործէ ի
վեր ունեցած համազգային
տօնախմբութիւնը պատմել
արժան դատեցինք:

ՉԻՆԱՑԻՈՅ ՀՈՂ ՄՇԱԿԵԼՈՒ ՏՕՆԱԽՄԵՐՈՒԹԻՒՆԸ

Ամեն տարի լուսնի առա-
ջին առանեւ հինգերորդ օրը
որ մարտ տմայն առաջին
օրուան կ'իյնայ, կայսրը
կը կատարէ անձամբ հող
հերկելու տօնը շրեղ հան-
դէսով. տօնախմբութեան
համար որոշեալ դաշտը եր-
թալով կայսերազունք և իշ-
խանք կը հետեւին, զաշտին
երկու կողմը զօրապետք և

կայսերական պահապանք կը
շրջապատեն, երրորդը այն
նահանգի երկրագործնե-
րուն յատկաւեայ, որ իրենց
արհեստին կայրէն յար-
զանք տրուիլը տեսնելու
կուգան. չորրորդ կողմը իշ-
խանաց համար, կայսրը մի-
նակ դաշտին մէջ մտնելով
ինն անգամ կը խոնարհի
գլուխը գետին դնելով (դի-
ւն) այսինքն երկնից չափա-
ռածը պաշտելու, բորձը
ձայնով իրենց կրօնքին սո-
վորութեամբ աղօթք մը
կ'արտասանէ իր և իրեն ժո-
ղովուրդը եզոզ աղգին աշ-
խատանացը վրայ տէրջը
օրհնութիւնը կը հրաւիրէ.
վերջը իրը առաջին կրօնա-
պետ ազգին կով մը կը մօր-
թէ, և ամեն բարեաց տէրն
եզոզ երկինքին կը զոհէ,
ողակէզք կտրած առեն որ
պաշտաման սեղանին վրայ
կը դնեն, կայսեր կը ներ-
կայացնեն երկու կովով
լուծեալ արօր մը խիտ
ղարդ արեալ. ինքնակալը
կայսերական հագուստները

հանելով արօրին ծայրը կը բռնէ, և ամբողջ դաշտին շարունակութիւնը բազում տեղ կը հերկէ զուարթ դէմքով մը և իշխանաց կը յանձնէ որ անոնք ալ հետը հետէ հերկել կ'սկսին մէկդմէկէ աւելի ճարտարութեամբ. հանդէսը կ'աւարտի, ստակ և կտաւ ցըրուելով գտնուող երկրագործաց, և անոնց որ կայսեր դէմը աւելի արագութեամբ մնացած հերկուելիք հողը շուտ և գործունէութեամբ կ'աւարտէն. մշակութիւնը լրանալէն քիչ ատեն վերջը հողին պէտք եղած աղբը տալով կայսրը նորէն կուգայ իւր դաշտը սերմանելու միշտ շքեղ հանդիսով, և երկրագործաց ներկայութեամբը. միեւնոյն հանդէսը ամեն նահանգի մէջ կը կատարուի իրենց փոխարքայից, իշխանաց և երկրագործաց ձեռամբ:

Վերայիշեալ տեղեկութիւնէն երկու օգտակար կէտ կը հասկցուի. առաջին 500

միլիօն ժողովուրդին սընունդ չպիտի բաւէ, եթէ կայսրը խրախոյս տալով երկրին բերքը չ'աւելցնէ. երկրորդ՝ հողը ինչ մեծ հարստութիւն ունի որ այսչափ միլիօն ժողովուրդ կը սնուցանէ:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ

Մարդ, իւր մերկութեան ժամանակ, իւր բնական ծածկոցովն կը բաւականանար և իբր սնունդ՝ կ'ուտէր իւր իշխանութեան տակ գտնուող ընտանի կենդանեաց միսն ու խոտեղէններ: Այն ատեն ուրիշ բանի մը պէտք չ'ուրէր, Բայց երբ շատնալով՝ ունեցածն անբաւական եղաւ, իւր հրամանին տակ չի դանուողներուն վրայ իշխելուն պատակաւ հնարքներ և գիւտեր ըրաւ. յայնժամ երեւան եւրան զանազան գործիքներ, որոցմէ ծագեցան տրհաստք, Բնական վիճակի մէջ ոյժը

իրաւանց կը յաղթէ . մեծն
իրմէ փոքրը իւր բարբարո-
սական ակարծակին զոհ
կ'ընէ . Մարդն , երբ տե-
սաւ որ իրմէ մեծն կամ
խորամանդն նոյն բանը պի-
տի ընէ նաեւ իրեն . զայն
վայրի անուանեց . մահաւան
դատապարտեց և մասնաւոր
գործիքներ հնարեց առ այս .
Սննդեան համար բնապէս
աճող բոյսերն տնքաւական
ըլլալով , քաղեց նոցա հուն-
տերն և սերմանեց՝ մաս մը
սննդեան և մաս մ'այ հըն-
ձեղու համար : Վերջապէս
պիտոյքներն օր ըստ օրէ
շատնալով , այլեւայլ հը-
նարքներ ու գիւտեր ըրաւ՝
բնութեան հետեւելով և
արհեստն ծաղկեցուց : Օ-
գին փոփոխութենէն պահ-
պանուելու համար՝ գետ-
նափոր պատապարաններ շի-
նեց . կենդանեաց յաւկաց-
եալ ծածկոցներն ինքզինքին
ոռպհականեց . ի վերջոյ իւր
անիրաւութիւնն ղգալով ,
մամուկէն խրատ առաւ .
կտաւ գործելը գտաւ , բը-

նական ծածկոցներու բուր-
դըն ոլրեց և ձեւը փոխե-
լով՝ գործեց զայն :

Օրինակ առնելով կուղ-
բէն (քաւթօր) , որ երկու
յարկով բնակարան մը կը
շինէ իրեն , և թռչնոց բոյ-
ներէն , սկսաւ օգին մէջ
շէնքեր շինել իբր պատըս-
պարան . այսպէս հետզհե-
տէ խրճիթներէ ձեւացան
գիւղեր , գիւղերէ՝ քաղաք-
ներ . այնպէս որ երթալով
սկսանք բոլորովին բնութե-
նէ շեղիլ , ֆարի , փայտի ,
պղնձի և երկաթի գործիք-
ներուն դարերն միմեանց
յաջորդեցին հետզհետէ :
Մարդիկ շատնալով՝ անունդ
և տեղ չի բաւեց . ուստի
սկսան զմիմեանս հարստա-
հարել քաղաքականութիւն
անուամբ և ահռելի միջոց-
ներով , կարելի եղածին չափ
շուտ մարդ մեռցնելու գոր-
ծիքներ հնարուեցան , Զար-
մանալի տգիտութիւն . աչ-
խաղհա այնքան ընդարձակ
է որ , արդի ժողովրդեան
հարիւրապատիկը կրնայ սը-

նուցանել ու պատասպարել :
Այժմ բամբակն ու բամ-
բակիւէններն գտնուած են,
որոցմէ մեզ ծածկոցներ կը
շինեմք : Վերջապէս սնունդք
և օղին փոփոխութեանց
դիմաց ընդհանուր համար հնար-
ուած զգեստք, ամեն ինչ
արհեստով է : Լերանց տա-
կէն մեծամեծ աշխատու-
թեամբ դուրս կը հանուին
զանազան հանքեր և մե-
տաղներ : մարդուս պիտո-
յիցն համար : Հեռաւորու-
թիւններն մօտեցնելու մե-
տք շտրիկ կը գործածուի
իբր շարժիչ ոյժ և ահագին
լերանց սարքաւոր ճամբայ-
ներ կը բացեն : Երկգրա-
կան դորութեամբ թեւերով
հաճախի միջոցաւ թէ՛ թե-
րով և թէ՛ խողովակներով կը
խօսակցուին : խոշորացոյցով
տեսական դորութեան ներ-
քիւ շինկող բոյսերու և կեն-
դանեաց գործարաններու
զադտնիքներն երեսան ե-
լան փորագրութեամբ նախ-
նեաց անցքերն և ապա-
րութեամբ արդի եղելու-

թիւններն անջինջ դրոշմուե-
ցոն : վերջապէս բոլոր ա-
ստք, որոց տիւնատես եմք,
արուեստով յառաջ եկան :
Հին ժամանակի արուես-
տի հետքերէն մնացած են
Ձինացոյց երկրին հրախա-
յին կողմը ամբողջ սահմա-
նին երկայնքը գտնուած ա-
հագին պարիսպն, Ռաբ' լոնի
աշտարակն, որու մէկ մասը
միայն մնացած է այսօր և
Եգիպտոսի բուրգերն, որոց
միայն մէկ հատին, ալիքն
Քէոբսի բարձրն շինուիւեան
համար հարկւր հազար հազի
աշխատած են երեսուն տա-
րի : Կան նաեւ եգիպտական
կոթողներ, որոցմէ մի քա-
նիկ Եւրոպա փոխադրուած՝
մեծ քաղաքաց հրապարակ-
ներն կը զարդարեն, և մին
ալ Պոլսոյ Սուլթան Ահմէտի
հրապարակինն որ Կոստան-
դինի օրով բերուած է իսկ
ինչ որ շինուած կար ոսկիէ,
արծաթէ կամ պղինձէ, ա-
մենքն ալ կողպատուած են :
Օրինակի համար Հռոմ ոս-
կողոյն արձանը, գոր նոյն

կզղւոյ բնակիչներն շինեցին Դիմետր Պօլիօրկէթի ժամանակ պատերազմական մեքենայից պղինձովն և նըւերիցին յանուն Ապոլոնի, Կլեոսի թէ աօի աշնքան մեծ է եղեր որ, մարդ մը իւր երկու թեւով նորա ստըին մէկ մատը չի կրնար եղեր գրկել, և երկու ոտքերն մէկ մէկ ժայռի վրայ դրած, այն տաննուան ամենէն մեծ նաւերն առագաստաբաց կ'անցնին հղեր տակէն Այո հակայ արձանն երկրաշարժէ մ'իյնալով՝ երկար ատեն կտորատմանց ապա, երբ Հռոդոս կզղին ինկաւ ուրիշ իշխանի մը ձեռք. այդ բեկորներն ծախուեցան հրեայ վաճառականաց, որոնք 900 ուղտ բեռցոցին անանցմով, և գիտենք որ ուղտն շատ ծանր բեռներ կը վերցնէ:

Արհեստներն, բնդ հանուր առմամբ, կը բաժնենք երեքի. 1. Ապրուստի. 2. Անձին պաշտպանութեան յատկացեալ, և 3. Զբօսանաց:

Ապրուստի արհեստներն անոնք են, որոցմով մարդ իւր օրական պարէնը ճարեով՝ բնական արօտից տեղը լեցնելու հարկ եղած սնունդը կը գտնէ:

Անձին պաշտպանութեան արհեստներն են Լողալ գիտնալ, Զարի մէջ պատահած վտանգներէ զերծ մնալու համար. Զինով արժու թիւն, կենաց ապահովութեան համար. Մարմնամարդութիւն, մանուսնոց Պօլսոյ մէջ, ուր հրգեհ շատ կը պատահի, և վտանգի աւելն մարդո, երբ վարժ է մարմնամարդութեան, որքան բարձր տեղ մ'ալ որ գտնուի, կրնայ գիւրութեամբ իւր կեանքն ազատել չուանի մը մ'ջնջալ:

Զբօսանաց կամ փառաց արհեստներն անոնք են, որք անհրաժեշտ կ'որեւոր չեն ժողովրդեան և առանց որոց կրնայ ապրիլ մարդն. օրինակի համար Ղարգաւրուն պարուկ մը, հոյտկսպ շէնքեր, շքեղ հո-

գոհաստներ են. ունենալ.

Արհեստների կայացած են
երեք սկզբնական հիման
վրայ, որք են՝ Բնագիտու-
թիւն, Բնալուծութիւն և
Գծագրութիւն.

Բնագիտութիւնն արհես-
տից գործած եղելութեանց
գոյնն ու երեւոյթը չի փո-
խել.

Բնալուծութիւնն անոնց
գոյնն ու երեւոյթը կը փո-
խէ. աշխարհի մէջ ամեն
բան այս երկուքէն մէկուն
կը հպատակի.

Գծագրութիւնը օրինակ
մ'է, որ ձեւերը կը ներ-
կայաց' է. արհեստական
կերպիւ ուղւած ո'ւ է բա-
նի մէջ օրինակն երբ ցոյց
կ'տրուի մեկնութիւններով
և նշաններով. այս ալ գծա-
գրութիւն մ'է, կամ թէ
պէտք եղածն գծուած ու
ներկայացուցուած ըսել է.

Շատ մը արհեստից մէջ
ուղւած բանը գծագրուե-
լէ յետոյ, իսկութիւնը ներ-
կայացնելու համար պէտք
է ձուլել, փորագրել կամ
խարտել.

Ձուլելն նոյնն է գաճի
(ալշիի) ոսկիի, արծաթի,
պղնձի, երկաթի և բոլոր
մետաղաց համար ընդհան-
րապէս, որ կը կայանայ հա-
լած մետաղն լեցնել կան-
խաւ պատրաստուած ու
ձեւակերպուած կաղապա-
րի մը մէջ.

Դժուարինն է խարտել
կամ փորագրել, վասն զի
նախ պէտք է հանել աւե-
լորդ մասերը, և ապա աշ-
խատիլ մանրամասն կէտե-
րուն վրայ, որպէս զի ուղ-
ւած ձեւն ճշդութեամբ
գործադրուի.

Պօլսոյ արհեստից յետա-
դիմութեան պատճառն այն
է որ, արհեստաւորը յիշ-
եալ երեք ուսմանց տեղ-
եակ չեն, իրաւ է որ շատ
մը գիւտեր եղած են, բայց
թէ պաշտպանութիւն չի
գտնելով և թէ անկատար
լ'լուլ' յառաջ չեն դացած.
Մեծամեծ գպրոցներ ունե-
ցած ենք առանց արդիւն-
քի. այդ գպրոցներն թող
մէկ յարկի վրայ գտնուին,

բայց բաւական ընդարձակ, որպէս զի կէսն յատկանայ ուսման, կէսն ալ արհեստի: Հոն թող մեր արու և էգ զուականերն, փոխանակ վատթարանայու և ապարդիւն տտեն վատնելու, իրենց ժամանակին կէսն անցունեն արհեստներով, իսկ միւս կէսն յատկացնեն ուսման, մանաւանդ վերոյիշեալ ուսմանց: Ասով իրենց դպրոցական չըջանին մէջ թէ՛ ուսում և արհեստ սովորած կ'ըլլան և թէ դպրոցէ ելած տտենին, իրենց աշխատութեամբն դիզուած փոքրիկ դրամագլուխ մը կ'ունենան, որով ըստ այնմ գործի մը պարապելով՝ օրական պարէնին կը ճարին և աղքատութեան արմատն կը ջնջուի ասանկով: Ազըկուէք ալ օժտի դերութեանէ ազատելով, փոխանակ խեղճութեամբ տունը նըստելու և իրենց ընտանեաց բռն մ'ըլլալու, իբր արու կը դործեն և մինչեւ իսկ նոցա հետ կը մըցին: Ասով

փոխանակ ազդային նուազման պատճառ ըլլալու, կ'օգնեն անոր աճման, որմէ կը հետեւի հանգիստ ապրուստ, և հետեւաբար հարստութիւն:

Հարուստներն, որոց օգնած են բաղդն ու գէպքերու բերմունքն, զիտնալու են որ այդ ստակն գործածելով աւելցուցածն իրենցը շէ, ուրիշի մը համար կը դիզեն: Օր մը իրենցմէ աւելի խելացի մէկը, (փեսայ, ընկեր, ևն.) նոցա զազտեացն տեղեկանալով, ինք կը վայելէ անոնց աշխատութեան պոռուղն: Ուրեմն փոխանակ մէկ հոգի վայելելու, թող շատերն օգտին այդ հարստութենէն: Թող բանան գործարաններ, դպրոցներ, հիւանդանոցներ, անկելանոցներ, որպէս զի իրենց մահուքնէ ետքն արժանանան անմահութեան և իրենց անունն դրոշմուի թէ՛ ժողովրդեան սրտին և թէ՛ պատմութեան էջերուն մէջ:



ԱԶԴ

ԴԵՂԱՐԱՆ Ա. ԳՕԻԹԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ այժմ մեր դեղարանը Թօրհանէի Թրամվայի կայարանին դիմացը 359 թիւ խանութը փոխադրած ենք, ուր ամեն անսակ քիմիական ընտիր դեղեր մեծ խնամով և խիստ աթոն զնով կը պատրաստուին, և եղանակին յարմար նոր-վեկիոյ ձկան անարատ իւղ տա՛ն զնով կը ծախուին:

Նաեւ Մեծ. Տօքթօր Զէռահեան էֆէնտի բարեհաճած է շաբաթը երեք օր այցելել մեր դեղարանը, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ժամը 6—8 ձրի և 8 էն մինչեւ 11 վճարմամբ դարմանել. աղքատները ամենուրեք ձրիարար կը դարմանուին:

Ք Ք Ք

ՊՕՂՈՍ ՔԻՐԵՃՃԵԱՆ

Թօրհանէ հաստատինտէ 409 նիւմերօլու տիւքքեանտա հէր նէվի տէմիր ալէախլարը, վէ պինա իչիւն լաղըմ օլան ալէմիրէ այիտ Թաղըմյարը եարմաղտա տըր, վէ հէր պոյ դաղալար աշաղըտան կէլէնյէրաէն տահա միւհքէմ վէ ֆիլ-յաթլարը տա էհվէն օլարադ վէ գուսուրըզ օլաճաղընը տոխի թէահիւտ իտէր: